ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 000354/21

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.12.2023թ. ք. Երևան

Ես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 354 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 15.12.2023թ. թիվ 354 արձանագրությունը,

ՊԱՐԶԵՑԻ

Ֆիզիկական անձ Հայկ Մանվելի Մինասյանի (ՀԾՀ՝ 3912820244, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հաղթանակի 9 փող. տուն 44Ա) համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության 21.08.2023թ. թիվ 1520660 վարչական ակտի՝ առանց իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169 հոդվածով:

Կողմը պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին՝ չի ներկայացել, չի ներկայացրել գրավոր բացատրություն կամ առարկություն:

Այն փաստը, որ Հայկ Մինասյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33-րդ, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169 հոդվածի՝ Հայկ Մինասյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 15 000 դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
STATE REVENUE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA
ГОСУДАРСТВЕННЫХ ДОХОДОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
02647057

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդվածներ՝

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. **900005240487** տուգանքի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը